# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 10 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքի մասին:
2. Գետամեջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 36-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ
համայնքի ավագանու 2017 թվականի
հունիսի 24-ի N 36-Ա որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**(01/01/2017թ. - 30/09/2017թ. ժամանակահատվածի համար)**

1. Համայնքի անվանումը — ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
2. Փոստային հասցե — 2412
3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման՝ — ԿՈՏԱՅՔ, 207025
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը — ________
5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը — ________
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ — (համայնքի բյուջե՝ 2)
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՎԵՏԻՍ ՎԱՐԱԶԴԱՏԻ

(Ա. Ա. Հ.)

Կ. Տ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Ձև 1

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2017թ. - 30/09/2017թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| | | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 | | 23567.0 | 23567.0 | 0.0 | 23567.0 | 23567.0 | 0.0 | 17071.5 | 17071.5 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + | 7100 | 11723.3 | 11723.3 | x | 11723.3 | 11723.3 | x | 8237.2 | 8237.2 | x |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | 3299.0 | 3299.0 | x | 3299.0 | 3299.0 | x | 1535.7 | 1535.7 | x |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական | | 3299.0 | 3299.0 | x | 3299.0 | 3299.0 | x | 1535.7 | 1535.7 | x |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ | 7136 | 8114.3 | 8114.3 | x | 8114.3 | 8114.3 | x | 6394.0 | 6394.0 | x |
| 1121Ա | Գույքահարկ փոխադրամիջոցների | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 50.6 | 50.6 | x |
| 1121Բ | Գույքահարկ փոխադրամիջոցների | | 8114.3 | 8114.3 | x | 8114.3 | 8114.3 | x | 6343.4 | 6343.4 | x |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ | 7145 | 310.0 | 310.0 | x | 310.0 | 310.0 | x | 307.5 | 307.5 | x |
| 1131 | Տեղական տուրքեր, (տող 1132 – տող | 71452 | 310.0 | 310.0 | x | 310.0 | 310.0 | x | 307.5 | 307.5 | x |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր | | 30.0 | 30.0 | x | 30.0 | 30.0 | x | 57.5 | 57.5 | x |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար | | 30.0 | 30.0 | x | 30.0 | 30.0 | x | 57.5 | 57.5 | x |
| 1133Ա | -մինչև 300 քառ. մ. ընդհանուր | | 30.0 | 30.0 | x | 30.0 | 30.0 | x | 57.5 | 57.5 | x |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից | | 80.0 | 80.0 | x | 80.0 | 80.0 | x | 50.0 | 50.0 | x |
| 1137է | հիմնական և ոչ հիմնական | | 80.0 | 80.0 | x | 80.0 | 80.0 | x | 50.0 | 50.0 | x |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ | | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 10432.7 | 10432.7 | 0.0 | 10432.7 | 10432.7 | 0.0 | 7824.5 | 7824.5 | 0.0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական | 7331 | 10432.7 | 10432.7 | x | 10432.7 | 10432.7 | x | 7824.5 | 7824.5 | x |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական | | 10432.7 | 10432.7 | x | 10432.7 | 10432.7 | x | 7824.5 | 7824.5 | x |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + | 7400 | 1411.0 | 1411.0 | 0.0 | 1411.0 | 1411.0 | 0.0 | 1009.7 | 1009.7 | 0.0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից | 7415 | 1361.0 | 1361.0 | x | 1361.0 | 1361.0 | x | 749.0 | 749.0 | x |
| 1331 | Համայնքի սեփականություն | | 1361.0 | 1361.0 | x | 1361.0 | 1361.0 | x | 749.0 | 749.0 | x |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 | 7422 | 20.0 | 20.0 | x | 20.0 | 20.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1351 | Տեղական վճարներ | | 20.0 | 20.0 | x | 20.0 | 20.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1351Գ | - տեղական վճարներ շինարարության | | 20.0 | 20.0 | x | 20.0 | 20.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող | 7451 | x | 30.0 | 0.0 | x | 30.0 | 0.0 | x | 260.7 | 0.0 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով | | 30.0 | 30.0 | x | 30.0 | 30.0 | x | 260.7 | 260.7 | x |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2017թ. - 30/09/2017թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընդամենը (ս.7–ս.8) | այդ թվում | | Ընդամենը (ս.10–ս.11) | այդ թվում | | Ընդամենը (ս.13+ս.14) | այդ թվում | |
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող | 47294.7 | 23567.0 | 23727.7 | 47294.7 | 23567.0 | 23727.7 | -10141.8 | 15763.4 | -25905.3 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ | 31741.0 | 21441.0 | 10300.0 | 32601.0 | 21441.0 | 11160.0 | 24473.2 | 15713.4 | 8759.8 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 16511.2 | 15631.4 | 879.8 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 16511.2 | 15631.4 | 879.8 |
| 2130 | 1 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ, | 346.0 | 346.0 | 0.0 | 346.0 | 346.0 | 0.0 | 82.0 | 82.0 | 0.0 |
| 2131 | 1 | 3 | 1 | Աշխատակազմի /կադրերի/ գծով | 346.0 | 346.0 | 0.0 | 346.0 | 346.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային | 9207.0 | 207.0 | 9000.0 | 10067.0 | 207.0 | 9860.0 | 7880.0 | 0.0 | 7880.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային | 9207.0 | 207.0 | 9000.0 | 10067.0 | 207.0 | 9860.0 | 7880.0 | 0.0 | 7880.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -11072.3 | 0.0 | -11072.3 | -20932.3 | 0.0 | -20932.3 | -48685.0 | 0.0 | -48685.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 38607.7 | 0.0 | 38607.7 | 28747.7 | 0.0 | 28747.7 | 995.0 | 0.0 | 995.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 38607.7 | 0.0 | 38607.7 | 28747.7 | 0.0 | 28747.7 | 995.0 | 0.0 | 995.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | 220.0 | 220.0 | 0.0 | 220.0 | 220.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2560 | 5 | 6 | 0 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2561 | 5 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(հազար դրամով)

(01/01/2017թ. - 30/09/2017թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում | |
| | | | | վարչական մաս | Ֆոնդային մաս | | վարչական մաս | Ֆոնդային մաս | | վարչական մաս | Ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող | x | 47294.7 | 23567.0 | 23727.7 | 47294.7 | 23567.0 | 23727.7 | -10141.8 | 15763.4 | -25905.3 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + | x | 23567.0 | 23567.0 | x | 23567.0 | 23567.0 | x | 15763.4 | 15763.4 | x |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ | x | 18043.0 | 18043.0 | x | 18043.0 | 18043.0 | x | 13513.4 | 13513.4 | x |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ | x | 18043.0 | 18043.0 | x | 18043.0 | 18043.0 | x | 13513.4 | 13513.4 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և | 4111 | 18043.0 | 18043.0 | x | 18043.0 | 18043.0 | x | 13513.4 | 13513.4 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ | x | 4091.0 | 4091.0 | x | 4091.0 | 4091.0 | x | 2250.0 | 2250.0 | x |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + | x | 995.0 | 995.0 | x | 995.0 | 995.0 | x | 476.0 | 476.0 | x |
| 4212 | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 590.0 | 590.0 | x | 590.0 | 590.0 | x | 215.0 | 215.0 | x |
| 4214 | - Կապի ծառայություններ | 4214 | 370.0 | 370.0 | x | 370.0 | 370.0 | x | 261.0 | 261.0 | x |
| 4215 | - Ապահովագրական ծախսեր | 4215 | 35.0 | 35.0 | x | 35.0 | 35.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ | x | 1096.0 | 1096.0 | x | 1096.0 | 1096.0 | x | 324.0 | 324.0 | x |
| 4232 | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 116.0 | 116.0 | x | 116.0 | 116.0 | x | 82.0 | 82.0 | x |
| 4235 | - Կառավարչական ծառայություններ | 4235 | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 225.0 | 225.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 680.0 | 680.0 | x | 680.0 | 680.0 | x | 17.0 | 17.0 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող | x | 1800.0 | 1800.0 | x | 1800.0 | 1800.0 | x | 1450.0 | 1450.0 | x |
| 4261 | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 250.0 | 250.0 | x | 250.0 | 250.0 | x | 150.0 | 150.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 1300.0 | 1300.0 | x | 1300.0 | 1300.0 | x | 1300.0 | 1300.0 | x |
| 4268 | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 250.0 | 250.0 | x | 250.0 | 250.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 | x | 1233.0 | 1233.0 | x | 1233.0 | 1233.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4710 | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ | x | 7.0 | 7.0 | 0.0 | 7.0 | 7.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4712 | - Նվիրատվություններ այլ շահույթ | 4819 | 7.0 | 7.0 | x | 7.0 | 7.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4720 | ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ | x | 50.0 | 50.0 | x | 50.0 | 50.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4723 | - Պարտադիր վճարներ | 4823 | 50.0 | 50.0 | x | 50.0 | 50.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771 | x | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4771 | - Պահուստային միջոցներ (վարչական բ.) | 4891 | 1176.0 | 1176.0 | x | 1176.0 | 1176.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ | x | 73407.7 | x | 73407.7 | 73407.7 | x | 73407.7 | 23774.8 | x | 23774.8 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + | x | 73407.7 | x | 73407.7 | 73407.7 | x | 73407.7 | 23774.8 | x | 23774.8 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող | x | 50407.7 | 0.0 | 50407.7 | 62007.7 | 0.0 | 62007.7 | 14360.0 | 0.0 | 14360.0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 24800.0 | x | 24800.0 | 34260.0 | x | 34260.0 | 14360.0 | x | 14360.0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ | 5113 | 25607.7 | x | 25607.7 | 27747.7 | x | 27747.7 | 0.0 | x | 0.0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | x | 12500.0 | x | 12500.0 | 900.0 | x | 900.0 | 879.8 | x | 879.8 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 12500.0 | x | 12500.0 | 900.0 | x | 900.0 | 879.8 | x | 879.8 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131 | x | 10500.0 | 0.0 | 10500.0 | 10500.0 | 0.0 | 10500.0 | 8535.0 | 0.0 | 8535.0 |
| 5133 | - Գեոդեզիական քարտեզագրական | 5133 | 9000.0 | x | 9000.0 | 9000.0 | x | 9000.0 | 7050.0 | x | 7050.0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 1500.0 | x | 1500.0 | 1500.0 | x | 1500.0 | 1485.0 | x | 1485.0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ | x | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ | x | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 | -49680.0 | x | -49680.0 |

ՀԱՏՎԱԾ 4

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ

(հազար դրամով)

| | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի N | Ցուցանիշների անվանումները | Ընդամենը (ս.4+ս.5) | այդ թվում | | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում | | Ընդամենը (ս.10+ս.11) | այդ թվում | |
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) | -23727.7 | 0.0 | -23727.7 | -23727.7 | 0.0 | -23727.7 | 27213.3 | 1308.1 | 25905.3 |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՎԱԾ 5

# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(հազար դրամներով)

| | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի NN | անվանումներ | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում | |
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** |
| 2850 | - **ստացված փոխատվությունների** | 6122 | | | | | | | | | |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), | | 23727.7 | 0.0 | 23727.7 | 23727.7 | 0.0 | 23727.7 | -27213.3 | -1308.1 | -25905.3 |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամով)

(01/01/2017թ. - 30/09/2017թ. ժամանակահատվածի համար)

| Տողի N | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև ծրագրային ծախսերի | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընդամենը (ս.7–ս.8) | այդ թվում | | Ընդամենը (ս.10–ս.11) | այդ թվում | | Ընդամենը (ս.13+ս.14) | այդ թվում | |
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող | 47294.7 | 23567.0 | 23727.7 | 47294.7 | 23567.0 | 23727.7 | -10141.8 | 15763.4 | -25905.3 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ | 31741.0 | 21441.0 | 10300.0 | 32601.0 | 21441.0 | 11160.0 | 24473.2 | 15713.4 | 8759.8 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 16511.2 | 15631.4 | 879.8 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 22188.0 | 20888.0 | 1300.0 | 16511.2 | 15631.4 | 879.8 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 18043.0 | 18043.0 | 0.0 | 18043.0 | 18043.0 | 0.0 | 13513.4 | 13513.4 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 290.0 | 290.0 | 0.0 | 290.0 | 290.0 | 0.0 | 165.0 | 165.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 370.0 | 370.0 | 0.0 | 370.0 | 370.0 | 0.0 | 261.0 | 261.0 | 0.0 |
| | | | | - Ապահովագրական ծախսեր (4215) | 35.0 | 35.0 | 0.0 | 35.0 | 35.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Կառավարչական ծառայություններ | 300.0 | 300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 | 225.0 | 225.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 17.0 | 17.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 250.0 | 250.0 | 0.0 | 250.0 | 250.0 | 0.0 | 150.0 | 150.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր (4264) | 1300.0 | 1300.0 | 0.0 | 1300.0 | 1300.0 | 0.0 | 1300.0 | 1300.0 | 0.0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 800.0 | 0.0 | 800.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ (5122) | 500.0 | 0.0 | 500.0 | 900.0 | 0.0 | 900.0 | 879.8 | 0.0 | 879.8 |
| 2130 | 1 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ, | 346.0 | 346.0 | 0.0 | 346.0 | 346.0 | 0.0 | 82.0 | 82.0 | 0.0 |
| 2131 | 1 | 3 | 1 | Աշխատակազմի /կադրերի/ գծով | 346.0 | 346.0 | 0.0 | 346.0 | 346.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Համակարգչային ծառայություններ | 116.0 | 116.0 | 0.0 | 116.0 | 116.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Մասնագիտական ծառայություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Պարտադիր վճարներ (4823) | 30.0 | 30.0 | 0.0 | 30.0 | 30.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2133 | 1 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 82.0 | 82.0 | 0.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային | 9207.0 | 207.0 | 9000.0 | 10067.0 | 207.0 | 9860.0 | 7880.0 | 0.0 | 7880.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային | 9207.0 | 207.0 | 9000.0 | 10067.0 | 207.0 | 9860.0 | 7880.0 | 0.0 | 7880.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Նվիրատվություններ այլ շահույթ | 7.0 | 7.0 | 0.0 | 7.0 | 7.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Գեոդեզիական քարտեզագրական | 9000.0 | 0.0 | 9000.0 | 9000.0 | 0.0 | 9000.0 | 7050.0 | 0.0 | 7050.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2211 | 2 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 10.0 | 10.0 | 0.0 | 10.0 | 10.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -11072.3 | 0.0 | -11072.3 | -20932.3 | 0.0 | -20932.3 | -48685.0 | 0.0 | -48685.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 38607.7 | 0.0 | 38607.7 | 28747.7 | 0.0 | 28747.7 | 995.0 | 0.0 | 995.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 38607.7 | 0.0 | 38607.7 | 28747.7 | 0.0 | 28747.7 | 995.0 | 0.0 | 995.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ | 25607.7 | 0.0 | 25607.7 | 27747.7 | 0.0 | 27747.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ (5122) | 12000.0 | 0.0 | 12000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 1000.0 | 0.0 | 1000.0 | 1000.0 | 0.0 | 1000.0 | 995.0 | 0.0 | 995.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 | -49680.0 | 0.0 | -49680.0 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | 220.0 | 220.0 | 0.0 | 220.0 | 220.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2560 | 5 | 6 | 0 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2561 | 5 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Պարտադիր վճարներ (4823) | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 24800.0 | 300.0 | 24500.0 | 33800.0 | 300.0 | 33500.0 | 14070.0 | 50.0 | 14020.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 300.0 | 300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 | 50.0 | 50.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 24000.0 | 0.0 | 24000.0 | 33000.0 | 0.0 | 33000.0 | 13530.0 | 0.0 | 13530.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 500.0 | 0.0 | 500.0 | 500.0 | 0.0 | 500.0 | 490.0 | 0.0 | 490.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 50.0 | 50.0 | 0.0 | 50.0 | 50.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 150.0 | 150.0 | 0.0 | 150.0 | 150.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից (4729) | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Պահուստային միջոցներ (վարչական բ.) | 1176.0 | 1176.0 | 0.0 | 1176.0 | 1176.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 37-Ն

## ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Գետամեջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Գետամեջ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 24-ի
N 37-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Գետամեջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Գետամեջ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Գետամեջ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, միջամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Գետամեջի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների(մասնագետի) կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման

լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Գետամեջի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Գետամեջի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների (մասնագետի) կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Գետամեջ համայնքի սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխությունը համաձայնեցնում է Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 38-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 53-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի հատված 6-ի՝

ա. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1176,0» թիվը փոխարինել «676,0» թվով.

բ. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1176,0» թիվը փոխարինել «676,0» թվով.

գ. 3110 տողի՝ «ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1176,0» թիվը փոխարինել «676,0» թվով.

դ. 3100 տողի՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1176,0» թիվը փոխարինել «676,0» թվով.

ե. 2161 տողի՝ «-Պարտադիր վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «0,0» թիվը փոխարինել «30,0» թվով.

գ. 2161 տողի՝ «-Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «0,0» թիվը փոխարինել «700,0» թվով.

է. 2161 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «10067,0» թիվը փոխարինել «10797,0» թվով, իսկ 7-րդ սյունակում «207,0» թիվը փոխարինել «937,0».

ը. 2161 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «10067,0» թիվը փոխարինել «10797,0» թվով, իսկ 7-րդ սյունակում «207,0» թիվը փոխարինել «937,0».

թ. 2160 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «10067,0» թիվը փոխարինել «10797,0» թվով, իսկ 7-րդ սյունակում «207,0» թիվը փոխարինել «937,0».

ժ. 2133 տողի՝ «-Պարտադիր վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «30,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժա. 2133 տողի՝ «-Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժբ. 2133 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «346,0» թիվը փոխարինել «116,0» թվով.

ժգ. 2133 տողի՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «346,0» թիվը փոխարինել «116,0» թվով.

ժդ. 2130 տողի՝ «Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «346,0» թիվը փոխարինել «116,0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ